

# «Երբ նպատակաուղղված ջանքերը տալիս են շոշափելի արդյունքներ...»

Գորիսի տարածաշրջանի սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների երեխաների հոսքը դեպի հատուկ հաստատություններ կանխարգելելու նպատակով Գորիսի սոցիալական աշխատողները «Գործընկերություն և ուսուցում»/ ԳՈՒՄ ՀԿ-ի աջակցությամբ 2011թ. դեկտեմբերի 10-27-ն ընկած ժամանակահատվածում Գորիս քաղաքի թիվ 1, 2, 3, 5, 6 և Գորիսի տարածաշրջանի Խնձորեսկ ու Վերիշեն համայնքների հիմնական դպրոցների աշակերտական խորհուրդների անմիջական մասնակցությամբ իրականացրել են «Մեկ դպրոց, մեկ ընտանիք, մեկ ամիս...» նախաձեռնությունը:

Նախաձեռնության նպատակն էր՝ աջակցել սոցիալապես անապահով երեխաներին և նրանց ընտանիքներին, հոգալ նրանց մեկ ամսվա կարիքները, /սնունդ, ամանորյա նվերներ, կոմունալ վճարներ/: Նախաձեռնության ընթացքում ընտրվել է սոցիալապես անապահով 12 ընտանիք: Յուրաքանչյուր դպրոցի աշակերտական խորհուրդ պետք է իրականացներ ֆոնդահայթայթում և հավաքված գումարով օգնել իրենց դպրոցի սոցիալապես անապահով մեկ ընտանիքի մեկ ամսվա սոցիալական կարիքները:

Սոցիալական աշխատողները պայմանավորվածություն են ձեռք բերել վերոնշյալ դպրոցների տնօրինության հետ, ներկայացրել նախաձեռնության նպատակն ու կարևորել երեխաները հոսքը դեպի հատուկ հաստատություններ կանխելու հնարավորությունը: Բոլոր դպրոցների տնօրեններն ու աշակերտական խորհուրդները ողջունել են գաղափարն ու մեծ պատրաստակամությամբ աջակցել նախաձեռնության իրականացման գործընթացին:

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի կողմից աշակերտական խորհուրդների ներկայացուցիչների համար իրականացվել է «Ֆոնդահայթայթման հմտություններ» թեմայով դասընթաց, որից հետո վերոնշյալ համայնքների հիմնական դպրոցների աշակերտական խորհուրդները իրենց դպրոցներում, համայնքներում իրականացրել են ֆոնդահայթայթում:

Տեղեկատվական թերթիկների տարածման միջոցով նախաձեռնության մասին աշակերտները իրագեկել են համայնքաբնակներին ու բոլոր շահագրգիռ մարդկանց հորդորել:

**«Հարգելի՛ համայնքաբնակներ, մասնակցելով «Մեկ դպրոց, մեկ ընտանիք, մեկ ամիս» նախաձեռնության իրականացմանը, Դուք կարող եք աջակցել մի քանի ընտանիքի մեկ ամսվա հոգսերը մի քիչ թեթևացնելու կարևոր գործին»:** Աշակերտական խորհուրդները հանգանակության արկղիկի միջոցով դպրոցներում կազմակերպել են հանգանակության ակցիա: Նամակներով դիմել են իրենց համայնքներում գործող գործարարների օգնությանը:

Բոլոր դպրոցները միասին հավաքագրել են **345.020 ՀՀ դրամ**, որով հնարավոր է դարձել հոգալ սոցիալապես անապահով 12 ընտանիքի մեկ ամսվա սոցիալական կարիքները՝ ներառյալ սնունդ, երեխաների համար ամանորյա նվերներ և կոմունալ վճարներ:



Նախաձեռնությունն իր բնույթով առաջին անգամ էր իրականացվում Գորիսի տարածաշրջանում, այն շարժել էր շատ-շատերի հետաքրքրությունն ու հավատ ներշնչել, որ բոլորն էլ մի փոքրիկ ներդրումով կարող են աջակցել սոցիալապես անապահով ընտանիքներին:

Պարզապես աննկարագրելի էր այդ 12 ընտանիքի ուրախությունն ու երախտագիտությունը: Նրանք անակնկալի էին եկել ու չէին հավատում, որ դեռ կան մարդիկ, ովքեր պատրաստ են օգնել ու դժվարին պահին միշտ սատար լինել իրենց: Իսկ նախաձեռնող խումբը գալիք Ամանորը կդիմավորի համեմատաբար հանգիստ խղճով՝ աչքի առաջ ունենալով ընտանիքների և երեխաների շնորհակալ հայացքները:

Շատ կարևոր է, որ սկսենք հավատալ՝ նպատակաուղղված ջանքերը միշտ էլ տալիս են շոշափելի արդյունքներ...

Այս նախաձեռնությանը մասնակցած բոլոր դպրոցների աշակերտական խորհուրդները կխարխուսվեն ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից: Վիճակահանության արդյունքում յուրաքանչյուր դպրոցից կընտրվի հանգանակությանն ակտիվորեն մասնակցած 5 նվիրատու, որոնց համար ԳՈՒՄ ՀԿ-ն կկազմակերպի կինոդիտում և գեղեցիկ հյուրասիրություն:

ՀԱՅՈՒԱԿ ՊԱՏԱՌԻԹՅՈՒՆ